VII

ԴԱՎԻԹ ՄԵՐԴԻՆՑՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XV Դ.)

Երուսաղեմի հայերեն ձեռագրերի մատենադարանի № 1198 ձեռագիրը պատմական և այլ նյութերի ժողովածու է, որը ընդօրինակել է Դավիթ երեցը, 1452 թ., Մերդինում։ Ձեռագրում, վոքրիկ հիշատակարանին առընթեր, գտնում ենք գրիչ Դավիթ երեցի կողմից հետագայում կազմած տարեգրությունը, շուրջ ութ տարվա՝ 1450—1457 թթ. անցուդարձի հիշատակությամբ։ Տեղեկությունները վերաբերում են Ջհանշահի և Ջահանգիրի, Ակ-Կոյունլու երկու եղբայրների՝ Ջհանգիրի և Ուզուն Հասանի կռիվներին, մերդինցիների ապստամբությանը և այլն, որոնք թարմ տվյալներ են պատմագրության համար։ Հեղինակն եղել է ոչ միայն իր նկարագրած եղելություններին ժամանակակից, այլև առանձին դեպքերի ականատես, այդ պատճառով էլ նրա տեղեկությունները հետաքրքիր են, հավաստի, որոնց շնորհիվ կարող ենք մասամբ վեր բարձրացնել հայ ժողովրդի XV դարի պատմության առանձին էջերի մթության քողը։

Հրատարակության համար առաջարկվող բնագիրը վերցրել ենք Մ. Տեր-Մովսիսյանի ձեռագրերի ցուցակից[1]։ Բուն հիշատակարանը, որը կազմում է մի քանի տող, անջատել ենք բնագրից և նշել միայն ծանոթագրության մեջ։

---

[1] Պատմության ինստիտուտի արխիվ, Մ. Տեր-Մովսիսյանի ֆոնդ, գործ № 4, էջ 74—75։

Ի թվին[1] ՊՂԹ (1450) եկ Ճհան[շ]այ միրզա ի Թավրիզու 74
յաշխարհէ և էառ զԵղնկայ[2]. և անաի առաքեց զոմն զաւրագլուխ
ի Միջագետս Թրխան աւղլի անուն. և նա եկեալ գերեաց զԹիլգուրան[3] և աւերեաց զնա և չարչարեաց զրաղում քրիստոնեայս և
5 նահատակեաց.և անտի եկեալ ի Իասըլէն, ի սահմանս Մերտինայս։
Եւ մերտինցիքն զարհուրեցան. և բաղումք ելեալ ամրացան յամրոցն Մերդնոյ[4]։

Ի թվիս Ջ (1451), որ նաւասարդի էր աւրն կիրակի՝, եկեալ Թրխան աւղլին պատերազմեցաւ ընդ մերտնցոցն և կոտրվաւ ի
10 Տնիսայ Աղապի գլուխն։ Եւ զկնի վեց աւուրն, յաւրն ուրբաթու,[6] քաղաքացիք ապստամբեցան ի Ճհան[գ[իր ամիրզայէն և ապսպրեցին զքաղաքն ի Թարխան-աւղլին. և ըստ արժանացն նոցա զոմանս տուգ[ա]նեց և զոմանս թալանեաց և սկսաւ բանալ զդռանսերն, որ կայր ինչք մերտնոցն, և զինչ որ հաւանէր յափըշտակէր և զինչ որ մնայր ի հնգից զմէկն առնէր. և կապուտ նշան
15 եդիր ի վերայ քրիստոնէիցն և բաղում չարիս արար, զոր թէ գրէի մի ըստ միոջէ նա գիրք մի լինէր, զինչ Եսայի Բաղուածս և այլ շատ։ Եւ սկսան քաղաքացիքն և Ղարա-Ղոյունլու խսարիլ զրերդն ի Նաւասարդէ ի Ջ (6)-էն՝ ի վեր, յորում էր թվականն
20 Ջ (1451). և զկնի Զատկի ԻԸ (28) աւուր, ի Յերևման խաչի կիրակին[8], եկեալ Ճհանկիրն Յամթայ ի Մերտին և ոչ հնազանդեցան նմա մերտնցիքն։ Եւ դարձաւ Յամիթ և զկնի այնորիկ եղև պատերազմ մեծ ի դուռն Ամթայ և կոտորումն[9] մեծից երկու դիմացն և սպանաւ անդ Մեսրոպ էրէց, Նախաշ տէր Մկրտչի որ-
25 դին[10]։ Եւ այս պատերազմս եղև ի երեքշաբթի[11], որ զկնի երկու աւուրն հինգշաբթի, Համբարձումն էր[12]։

Իսկ ի թվիս ՋԱ (1452), յաւուրս երկուշաբթի[13], արձակեցին ի բերդէն զռաղիաթն ի խատէն ամէքն հիւանդ, կիսոքն ի վայր կուռէին և հապ ուտէին և քան զկոտորածն կումային, կացին
30 ռոաղիաթն տարի մի[14], պակաս ե (5) աւր, ի խսարն. որոյ յայնմ աւրերն եկեալ էր Մհամատ ամիրզայն, Ճհանշի որդին, առ Ռուստամ Թրխան աւղլին և խոտրեցին զՃհանկիրն ի Յամիթ, որոյ վճար եղև այս գրոց և զառաջնայ Աստուած գիտէ։

Ի սմին ամի յաւագ Զատիկն[15] հաշ[տ]ութիւն եղաւ, հաշտեցան Ճհանշահ և Ճհանկիրն և դարձոյց զՄերտին ի Ճհանկիրն։ Եւ
35 յաւագ պահոցն[16] գնաց Ռուստամ պատերազմել ընդ Հասան պէկն ի Ջերմուկն[17] և կոտրվաւ Ռուստամն։

Եւ ի նոյն պահին բլաւ մզկի[թ]ն բերդին Մերտ[ն]այ, առանց շարժի և անձրև[ի]։

Դարձեալ ի նոյն պահքն կայծակ իջաւ ի վերայ Մարտին և այրեաց զնա, ի նոյն Մերտնայ բերդն։

5 Ի նմին ամի ելաւ Ճհանկիրն Ցամթայ և գնաց Քուրթ թալանել. և Հասան պէկն եկեալ մտաւ Ցամիթ և էառ զնա. և Ճհանկիրն փախստական եղաւ. և եկեալ ի Մերտնայ բերդն մտաւ սեպտեմբերի Ի (20)։

Ցամին ՉԲ (1453) եկաւ Հ[ա]սան պէկ և խսարեց զՄերտին ԺԵ

10 (15) աւր. և ապա հաշտ[եցան] Բ (2) եղբայրքն՝ Ճհանկիրն և Հասան պէկն։

Ի նմին ամի վախճանեցաւ Յովանէս էրէցն, Ղուկաս երիցու որդին, յուլիս Ա (1)։

Ցամին ՉԳ (1454)-ի յունվար ԺԱ (11), յաւուր շաբաթու,

15 վախճանեցաւ Առաքել վարդապետն[18] յԱրղնի[19],

Ցամին ՉԵ (1456) եկաւ Հասան պէկն Ցամթայ և գնաց ի Ճղիրայն խատել զնա. և նոքա հնազանդեցան նմա և եղեն հարկատու։ Եւ անտի եկեալ ի Մերտին. և խնդրեաց զսուլտան Համզայն, զՃհանդրի որդին, Կ (60) հոդով լինել նմա հեծելքաշ և Ճհան-

20 կիրն ոչ ետ։ Եւ նա արածեաց և քաշեց զՄերտնայ մուտքն և կտրեց զայգիքն, իսկ Ճհանգիրն եկեալ գնաց առ Ճհանշահն և խնդրեաց ի նմանէ հեծեալ, զի գայր պատերազմել ընդ եղբաւրն իւր Հասան պէկն։ Եւ ետ նմա զեղնկայ քաղաքն և ասաց նմա՝ գնալ յեղնկայ. և զԱրապշահ պակն, յոր երզնկայ էր, առնուլ ընդ

25 իւր և երթալ պատերազմել ընդ Հասան պակն։ Իսկ Արապշահ ոչ իշխեաց գալ պատերազմել ընդ Հասան պակն, այլ ապսպրեաց դեզնկայն[20] ի Ճհանկիրն և ինքն գնաց առ Ճհանշահն, որ ի Զաղաթայ էր[21]։ Իսկ Հասան պէկն քշեց զկնի նորա Ը (8) աւուր ճանապարհ և յորժամ ոչ գտաւ զնայ, դարձաւ Ցամիթ քաղաք իւր։

30 Իսկ Ճհանկիրն, յորժամ Հասան պէկն գնաց զկնի Արապշին և անդ ժղուլ մնաց, եկ ի Ցեղնկայ փախստական և թողեալ անդ զորդին իւր զՄուրատ բէկն և եկեալ ի Մերտին։

Ցամին ՉԶ (1457) առաքեաց Ճհանկիրն զեղբայր իւր զՈւայիս պէկն առ Ճհանշահն ի Զաղաթէն և գանգատ արար ի վերայ

35 Արապշին. և Ճհանշահն զԱրապշահն թալանեց և զնգանեց։ || Եւ 75
փոխանակ Արապշին եկ Ճհանկրին այլ հեծել. գլխաւորք հեծել էին՝ Ռուսթամ պակն, Թրխանի որդին և Ալիշաքար պակն և իւր որդին և Սաւալան պակն և Փիր պակն. զսոսայ իւրեանց հեծելօք առաքեաց Ճհանշահն յաւդնութիւն Ճհանկրին առ ի պատերազմել ընդ

40 Հասան պէկն։ Եւ եկեալ սոքա Ճհանկիրն իւր հեծելովն և Սաւրայ[22] պարոնով գնացեալ Ցամիթ ի պատերազմ և խմպեալ պատերազմին և Բ (2) կողմունքն եկեալ ի պատերազմ. զօրացաւ Հասան պակն և պարտեցաւ Ճհանկիրն։ Քանզի Ճհանկրի զաւրքն ծռան և Ճհանկիրն փախեաւ և զաւրքն ցրուեցան։ Եւ Ռուստամն, Թըր-

45 խանի որդին, ըմբռնեալ եղև և տարեալ առաջի Հասան պէկին կացուցեալ և զկնի Գ (3) աւուր եսպան զնա։ Իսկ կին Ռուսթամին

փախեաւ և հասաւ յԱւրէլ քաղաքն[23] իւրեանց և յզարկել խնդրեաց
զլաշն Ռուսթամին և տարաւ զնա յՕրէլ։ Իսկ Ալիշաքարն և իւր
տղայն Ալի միրզայն և Սաւալան պակն սոքա ևս ըմբռնեցան և ար-
կել նոցա Հասան պէկն ի զնդան, իսկ Փիրի պակն մազապուրծ եղաւ։
5 Եւ այս հեծելիս կոտորած Ճհանկիրի փախն էր պատճառ և իւր
զաւրացն ծռու�նոյնպէս։ Եւ Ուլանիսն փախաւ, իսկ Սուրայ[24]
տէրն ըմբռնեցաւ. և Հասան պէկն էառ զիւր Բ (2) անառիկ բերդո-
րայքն և ետ նմա զՕշին գաւառն[25]։ Իսկ մերանցիքն, յորժամ զայս
ամենայն տեսան, միարանեցան մեծ և փոքրն և ասացին Ճհան-
10 կրին, թէ «Հնազանդեայ քո եղբաւրդ և տուր նմա զքո որդի հե-
ծելքաշ, ապա թէ ոչ մեք այսուհետև ոչ ունիմք կարողութիւն
հակառակ կալ.Հասան պէկին, եթէ գայ պատերազմել ընդ մեզ։ Եւ
Ճհանկիր առաքեաց զորդին իւր Լ (30) հոգով հեծելքաշ և հաշ-
տեցան։ Տեսէք եղբայրք, զանմտութիւն Ճհանկրին, որ այս ամե-
15 նայն արհաւիրքս, որ եղաւ և ամենայն աւերութիւն և ապա ետ
զորդին, և թէ տարով մի յառաջ տուեալ էր զորդին, այս ամե-
նայն աւերութիւնս չլինէր։

Ի սմին ամի եղև շարժ և բլաւ Կեղայ կէս բերդին և Եղնկայ
քաղաք տապալեցաւ և ջրահեղձ եղաւ[26]։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՈՒՆՆԵՐ

1. Բնագրում ինչպես նշել ենք «ի թվին» բառին նախորդում է դրչի հիշատակարանը, այն բերում ենք ամբողջությամբ. «Զաւրինակի արաւսուդ զԱռաքել վարդապետն յիշեցէք ի տէր և զանպիտան դրիչս զԴաւիթ էրէցս. քանզի դրեցաւ սա ի Թուականութեանս Հայոց ի յինն հարիւր մէկն, յամսեանն զեկարմբերի ԻԹ (29), աւուրն չորեքշ[արաթ]ու, Ցայտնութեան բարեկենդանն, ի դառն և ի նեղ ժամանակիս» (էջ 74), այնուհետև շարունակությունը կազմում է տարեդրությունը։

2. Զհանշահի կողմից Երզնկայի գրավման և հայորդող մի քանի դեպքերի մասին բավական հետաքրքիր տեղեկություններ գտնում ենք Դավիթ եպիսկոպոսի 1453 թվի հիշատակարանում, որը բերում ենք ամբողջությամբ. «Ի Թուականութեան Հայոց ՊՂԹ (1450) ելեալ սուլթանն Թաւրիզու Զիհանշահ անուն, բազում և անթիւ զաւրաւք ԿՌ (60000)-աւ եկեալ էառ զԵրզնկայն յազգէն Թուրքմանաց, որ էր ազգաւ Պայընտուր, և կալեալ զիշխանն Երզնկա քաղաքին և Խ (40) անուանի ամիրայ զհետ նորա, և տարեալ յարևելս կորուսին։ Եւ զկամխայ աստուածաշէն երկիրն ևս հասարակ զերեաց իբրև անձինս ԺՌ (10000) ընդ այր և ընդ կին, թող զայն որ մաշեցան։ Եւ զՆերքին Դերջանն և զՎերին Դերջանն, զԲաբերդ, զԿեղի, զԿոճակն և զԴայլ գետն, զՇիռեան, զՍատաղ առհասարակ զերեաց...։ Եւ զնացեալ նստան ի վերայ Ամթայ և ի վերայ Արզնու և ի վերայ Մէրաբնու, Ե (5) տարի բոլոր, և յամենայն աւուր մարտնչէին և կռուէին ընդ նոսա։ Եւ իջեալ բնակիչքն բերդորէից կոտորէին զթշնամիս... և ինքնեանք դարձեալ ի բերդն ամրանային։ Եւ հասեալ ի Բարեկենդանեաց յետին շաբաթ աւրն՝ ի տաւնի ս. Հայրապետացն ելեալ գաղտագողի ի հեծելէն՝ որ յԱմթայ վրայ էր նստեալ, և շուրջ պատեցին զերկիրն Արզնու, մինչդեռ այդն զառաւաւտն չէր մերկացեալ և Դ (4) դեզ ի ծառայութիւն վարեցին իբրև ՇՃ (500) հոգիս և սպանին անձինս Խ (40) և զարձան և բնակարանս իւրեանց։ Եւ դարձեալ ի Ծառգարդարն հաշտեցան և արարին խաղաղութիւն ընդ միմեանս և ազատեցան զերեալքն Արզնու... և ոչինչ կարաց առնել կամ զԱրզնի կամ զԱմթի կամ զՄերտին, այլ դարձաւ յաշխարհ իւր... Արդ ես Դաւիթ եպիսկոպոս աղաչեմ... յիշեսջիք... զիս... ի թվին ՉԲ (1453) դրեալ ի Խարբերդ»։ (Գ. Սրուանձտեանց, «Թորոս աղբարշ մասն Բ, կ. Պոլիս, 1885, էջ 380—381)։

3. Ճիշտ ձևը Թլղուրան, Ամիդից արևմուտք։

4. Թարխան օղլու արշավանքը դեպի Ամիդ և կռիվները համառոտաբար տես նաև Անանուն Սեբաստացու (ՄԺ, 1, էջ 168) և մի ուրիշ ժամանակագրի մոտ (տես վերևում, էջ 152)։

5. Շարժական տոմարի համաձայն հայոց Ջ թվի նավասարդի 1-ը կընկնի 1450 թ. նոյեմբերի 29-ին (Ed. Dulaurier „Recherches sur la chronologie Arménienne, t. 1er, Paris, 1859, էջ 387) կիրակի։ Եթե նկատի ունենանք այդ հատվածի անմիջական շարունակությունը. «Եւ զկնի վեց աւուրն յաւրն ուրբաթուշ», ինչպես նաև մի քանի տող ներքև «և Ղարա-Ղոյունլու խսարիլ զրերոն ի նաւասարդէ ի Զ (6)-էնշ» վկայությունը, ապա ամսաթիվը կարող ենք ճշտել։ Վերջին վկայությունից կարելի է եզրակացնել, որ Մերդինի այս դեպքերը տեղի են ունեցել նաւասարդի առաջին շաբաթում, մյուս կողմից առաջին վկայության «յաւրն ուրբաթշ» հատվածը պետք է ընկնի դարձյալ նաւասարդի առաջին շաբաթվա մեջ Թարխան օղլու Մերդին հասնելու վեցերորդ օրը։ Ուստի, նոյեմբերի 29-ից հաշված, վեցերորդ օրը կընկնի դեկտեմբերի 4-ին, և այդ օրն էլ իրոք ուրբաթ է։ Այստեղից էլ Թարխան օղլին Մերդին եկել է 1450 թ. նոյեմբերի 29-ին կիրակի օրը, իսկ մերդինցիների ապստամբությունը Ակ-կոյունլու Զհանդիրի դեմ տեղի է ունեցել դրանից վեց օր հետո, այսինքն դեկտեմբերի 4-ին, ուրբաթ օրը։

6. Այսինքն 1450 թ. դեկտեմբերի 4-ին, տես վերևում, ծանոթ. 5։

7. Այսինքն 1450 թ. դեկտեմբերի 4-ից։

8. Այսինքն 1451 թ. մայիսի 23-ին, կիրակի օրը, որովհետև զատիկը կրնկնի ապրիլի 23-ին։

9. Բնագրում «կորուումնք» ձևով։

10. Մկրտիչ Նաղաշի որդու՝ Մեսրոպ երեցի մասին տեղեկություն դանում ենք նաև Մատենադարանի № 2379 ձեռագրում, բերում ենք նրան վերաբերող հատվածները.

ա. «...և ի վայելումն աստուածապարգև զօակին իւրոյ (Մկրտիչ Նաղաշին—Վ. Հ.) տէր Մեսրոպին, որոյ տէր Աստուած վայելել տացէ երկար կենաւք և պարագայից ամաւք...» (էջ 260ա)։

բ. «...և զծաղկեալ զաւակն իւր (Մ. Նաղաշի —Վ. Հ.) և զաւագ որդին զտէր Մեսրաւպ...» (էջ 260բ)։

գ. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՇահմելիքն զկենակցին աէր Մեսրոպայ, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս, զի դեռ Բ (2) ամիս էր, որ տէր Մեսրոպն երէց էր աւրհնուած և Շահմելիքն նոր տիրուհի և նման արեղտկան փոխեցաւ ի Քրիստոս ի ՊՂԸ (1449) թվին», (էջ 262ա և բ)։ Ուրեմն Աստվածատուրն այս հիշատակարանը գրել է շուրջ 1449—1450 թվերին։ Երկրորդ վկայության «զտուաղ որդին» հատվածը թերևս կարող է մատնացույց անել, որ Մեսրոպ երեցը Մկրտիչ Նաղաշի միակ զավակը չէ, թեև մենք հակառակ կարծիքի ենք, որովհետև, եթե Մկրտիչ Նաղաշը, բացի Մեսրոպ երեցից ուրիշ զավակներ ունենար, հիշատակարանում անպայման կհիշվեր նրանց մասին։ Հետաքրքիր է նաև երրորդ վկայության տվյալները, ըստ որի Մեսրոպ երեցը քահանա ձեռնադրվել է 1449 թվին, ամուսնացել՝ նույն թվին։ Մեսրոպ երեցը սպանվել է 1451 թվի հունիսի 1-ի (տես ներքևում ծանոթ. 11) Ամիդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, նշանակում է նա սպանվել է երիտասարդ հասակում։

11. Այսինքն ճակատամարտը տեղի է ունեցել 1451 թվի հունիսի 1-ին, երեքշաբթի։

12. 1451 թվի համբարձման տոնը կընկնի հունիսի 3-ին, հինգշաբթի։

13. Հավանաբար 1452 թ. մայիսի 17-ին, երկուշաբթի։

14. Այս մասին մասամբ տես վերևում, ծանոթ. 2։ Հավանաբար այս կռիվների ժամանակ տեղի ունեցած մի եղելությանն է վերաբերում 1452 թվի Աղթամարում Դրիզոր դրչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանի հետևյալ հատվածը. «...բաղում աշխատանօք գծագրեցի... տառապանօք և բաղում տրտմութեամբ ի դառն և ի վշտալից ժամանակիս, .յոր եկն Ջրհանշայ փաթշահն և ի Ցոստան նստաւ բոլոր ձմեռ մի բաղում զօրօք...» (№ 4830, էջ 315բ)։

15. Երևի 1452 թ. զատկին, այսինքն ապրիլի 9-ին։

16. Հավանաբար նկատի ունի մեծ պասը, որը 1452 թվին ընկնում է փետրվարի 20-ից մինչև ապրիլի 8-ը։ Հետևապես Ռուստամ բեկի և Հասան բեկի կռիվները Ջերմուկում տեղի են ունեցել այդ ժամանակամիջոցում։

17. Դտնվում է Դիարբեքիրից հյուսիս-արևմուտք, իսկ Արզնից հարավ-արևմուտք, Եփրատի և Կըզլչըպուդ չայի միջև, վերջինիս աջ վտակներից մեկի վրա։

18. Այս անձնավորությունը, կարծում ենք, վերևում հիշված (ծանոթ. 1) Առաքել վարդապետն է, որն ընդօրինակելու համար Դավիթ Մերդինցուն 1452 թ. տրամադրել էր իր ձեռագիրը։

19. Արզնի կամ Արկնի, փոքրիկ քաղաք, Բոլաղ լեռան լանջին, Դիարբեքիրից Խարբերդ ընկած ճանապարհի վրա, վերջինիցս հարավ-արևելք։

20. 1446 թվին ընդօրինակված մի Հայսմավուրքի հիշատակարանում էլ նշվում է, որ Ջհանդիրը 1446 թ. ամռանն ասպատակել է Եկեղյաց գավառը («Նոտարք», էջ 150)։

21. Իմա, Խորասան։

22. Արդյոք Խիզանում (պատմական Աղձնիք) գտնվող այժմյան Սորի կամ Սորիկ գյուղը չէ՞։ Թերևս Աղձնիքի արևելյան մասում, Տիգրանակերտի շրջան, Սիլվան գավառի Զեյբա (Զէրբէ) ավանը։

23. Ս. Անեցու ժամանակագրության շարունակողը խոսելով Կաբա Ցուսուֆի 1406 թ. արշավանքների մասին, գրում է, որ նա «արար շատ աւեր և գնաց ի Թավրէզ և այլ յառաջ, և մլքեաց բաղում տեղիս մինչև ի Սուլտանիայ և Օրէլ քաղաք» (էջ 173)։ Այսպիսով, ըստ երևույթին, Օրելը պետք է փնտրել Սուլտանիայի կողմերում։

24. Հմմտ. «Սաւրայ» ձևի հետ (տես վերևում, ծանոթ. 28)։

25. Դուցե նկատի ունի Ուշնուհ քաղաքը և շրջանը, որն ընկած է Ուրմիո լճից հարավ-արևմուտք, մանրամասն տե՛ս և հմմտ. Հ. Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը....., (Հայկ. ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1953 թ., № 5, էջ 78, 83, ծանոթ. 45). Հմմտ. ներքևում, էջ 232, ծանոթ. 1.

26. Ժամանակակից մի հիշատակարանում հետևյալ հետաքրքիր տեղեկություններն են պահվել,

«Եւ զարձեալ ի սոյն աւուրս եղև ահագին շարժ Ցեղնկայն և կործանեաց զքաղաքն և զբոլոր պարիսպն յատակէն առպալեց և մեռան ի նմին ժամու ի շարժէն անձինք ԲԺ (12) հոգար հաւատացեալ և անհաւատ, այր և կին, ծեր և տղայ և սրբասնեալ քահանայք, զոր ոչ կարեմք զգեստս և զկսկիծ և զկոծ և զհառաչ նոցա թուել, զի ականատես եղաք ահագին պատուհասին, զոր արարիչն Աստուած մի ցուցցէ ծառայից իւրոց այնպիսի փորձութիւն և վիշտ..... և յայսմ ամի էր թվական Ջ և Ջ (1457) ապրիլ ամսոյ ԻԴ (23), յաւուր շաբաթու, կրկնազատկին, ի չորրորդ ժամու ցերեկին». Եւ իրոք, շարժական տոմարի հաշվով 1457 թ. ապրիլի 23-ը կլինի շաբաթ. հետևապես Դավիթ մերդինցին ևս իր հաշվումների մեջ հետևել է շարժական տոմարին, որովհետև անշարժ տոմարի դեպքում հայոց ՋՋ թվի ապրիլի 23-ը կընկնի 1458 թ. մեջ, իսկ այդ թվին, նշված օրը կլիներ կիրակի։